

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
1 նոյեմբերի 2011 թ.
Պետական գրանցման թիվ 12411463

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

11 հոկտեմբերի 2011 թ.
ք. Երևան

N 2875-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱԶՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ
ԴՈՒՐՄ ԳՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի «Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների ձևերի տպագրության, հարկային մարմնից հարկային հաշիվների ձևափոխման, հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգերը և հարկային հաշիվների ձևերի գինը սահմանելու մասին» N 1504-Ն որոշման N 4 հավելվածի 15-րդ կետը՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել, որ

1) նախկինում էլեկտրոնային եղանակով դուրս գրված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N 1504-Ն որոշման N 4 հավելվածով հաստատված՝ հարկային հաշիվների անվավեր ճանաչման կարգին համապատասխան անվավեր ճանաչված հարկային հաշիվների (այսուհետ՝ սահմանված կարգով անվավեր ճանաչված էլեկտրոնային հարկային հաշիվներ) վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են հարկային մարմին ինտերնետային կապի միջոցով իրական ժամանակում հարկային հաշիվների դուրսգրման ծրագրի («Է-ինվոյսինգ» (e-invoicing) ծրագրի) միջոցով՝ կիրառելով ծրագրի համապատասխան ֆունկցիան,

2) ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվողները ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում դուրս գրած և սահմանված կարգով անվավեր ճանաչված էլեկտրոնային հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմին ներկայացնում են սույն հրամանի N 1 հավելվածով սահմանված ձևին համապատասխան,

3) օրենքով սահմանված կարգով վերակազմակերպված իրավաբանական անձի կողմից դուրս գրված և սահմանված կարգով անվավեր ճանաչված էլեկտրոնային

հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ հարկային մարմին ներկայացվում են իրավահաջորդ իրավաբանական անձի կողմից սույն հրամանի N 2 հավելվածով սահմանված ձևին համապատասխան,

4) սահմանված կարգով անվավեր ճանաչված էլեկտրոնային հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմին են ներկայացվում այն ժամկետներում, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի «Հարկային մարմնի կողմից հարկային հաշիվների թղթային ձևերի տրամադրման, դուրսգրման, պահպանման, ստացված հարկային հաշիվների ձևերի օգտագործման մասին հաշվետվությունը ներկայացնելու, խոտանված, անվավեր ճանաչված և չօգտագործված հարկային հաշիվների ձևերի վերադարձման կարգը սահմանելու մասին» N 685-Ն որոշմամբ,

5) սահմանված կարգով անվավեր ճանաչված էլեկտրոնային հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային հաշվետվությունները ստորագրելու լիազորություն ունեցող անձանց համար սահմանված գրանցման կարգին համապատասխան հարկային մարմնում գրանցված լիազորված անձի էլեկտրոնային ստորագրությամբ,

6) մինչև սույն հրամանն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով անվավեր ճանաչված էլեկտրոնային հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երկամսյա ժամկետում:

Կոմիտեի նախագահ

Գ. Խաչատրյան

Հավելված N 1
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի
2011 թվականի հոկտեմբերի 11-ի
N 2875-Ն հրամանի

26

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ ԴՈՒՐՍ ԳՐԱԾ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱԶՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Փաստաթղթի հերթական համարը											
	(լրացվում է հարկային մարմնի կողմից)										
2. Հարկ վճարողի հաշվառման համարը											
3. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը											
4. Գտնվելու վայրը											
5. Ներկայացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը	տարի					ամիսը			ամսաթիվը		

Տեղեկացվում է, որ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով դուրս գրված՝ հետևյալ սերիա-համարով հարկային հաշիվները սահմանված կարգով անվավեր են ճանաչվել.

Հարկային հաշվի սերիա-համարը					

Կազմակերպության տնօրեն
(անհատ ձեռնարկատեր)
Հաշվապահ

_____ ստորագրությունը, անունը, ազգանունը

_____ ստորագրությունը, անունը, ազգանունը

Հավելված N 2
ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2011 թվականի հոկտեմբերի 11-ի N 2875-Ն հրամանի

26

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱԶՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Փաստաթղթի հերթական համարը	_____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)																																											
2. Նոր ստեղծված (միացման ձևի դեպքում՝ վերակազմակերպված) իրավաբանական անձի																																												
2.1. Հարկ վճարողի հաշվառման համարը												2.2.. ԱԱՀ վճարողի հաշվառման համարը																																
2.3. անվանումը																																												
2.4. Գտնվելու վայրը																																												
3. Վերակազմակերպված (գործունեությունը դադարեցրած) իրավաբանական անձի																																												
3.1. Հարկ վճարողի հաշվառման համարը												3.2. ԱԱՀ վճարողի հաշվառման համարը																																
3.3. անվանումը																																												
3.4. Գտնվելու վայրը																																												
4. Ներկայացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը												տարի											ամիսը											ամսաթիվը										

Տեղեկացվում է, որ

ձևով

(նշվում է վերակազմակերպման ձևը)

Վերակազմակերպված և ավելացված արժեքի հարկ վճարող հանդիսացած

(նշվում է վերակազմակերպված (գործունեությունը դադարեցրած) իրավաբանական անձի անվանումը և կազմակերպչ-
իրավական տեսակի հապավումը)

կողմից դուրսգրված ստորև նշված հարկային հաշիվները սահմանված կարգով
անվավեր են ճանաչվել:

Հարկային հաշիվի սերիա-համարը					

(նշվում է տեղեկություն ներկայացնող իրավաբանական անձի անվանումը և կազմակերպչ-
իրավական տեսակի հապավումը)

հանդիսանում է

(նշվում է վերակազմակերպված (գործունեությունը դադարեցրած) իրավաբանական անձի անվանումը և կազմակերպչ-
իրավական տեսակի հապավումը)

իրավահաջորդը և վերակազմակերպման փաստաթղթերին (փոխանցման ակտ,
բաժանիչ հաշվեկշիռ) համապատասխան իրավասու է անվավեր ճանաչելու (կամ
տեղեկություն ներկայացնելու) գործունեությունը դադարեցրած իրավաբանական անձի
կողմից դուրսգրված հարկային հաշիվները:

Կազմակերպության տնօրեն
(անհատ ձեռնարկատեր)
Հաշվապահ

ստորագրությունը, անունը, ազգանունը

ստորագրությունը, անունը, ազգանունը